№ 246 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 — 1900 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 № 246

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1901** ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան եւ մէկ եւ տան ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա եւ Բարօնակայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, դեկտեմբերի 28-ին, Սիօնի մայր-եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ կը կատարվի հոգեհանդիսա ի Տէր հանգուցեալ

ՎՐԱՑ ԹԱԳԱՒՈՐ ԳԷՈՐԳԻ XII-Ի

յիշատակին՝ նրա մահվան հարիւրամեայ տարեդարձի առիթով։ Պատարագը կը սկսվի առաւօտեան 9 ժամին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գօրդեան հանգոյցի լուծումը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Նամակ Բագուից։ Նամակ Վաղարշապատից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցներ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՕՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

—

Ֆրանսիական կառավարութիւնը ընդհանուր ներում շնորհեց այն բոլոր անձանց, որոնք որ և է առնչութիւն ունէին դատաստանական այն մեծ գործի հետ, որ պատմական նշանակութիւն ստացաւ վիպասան Էմիլ Զօլայի եռանդուն միջամտութիւնից յետոյ։ Բոլորը՝ թէ մեղաւորները և թէ արդարները՝ ներումն են ստացել և այլ ևս չը կան հալածվածներ և զրկվածներ։

Ի՞նչ նշանակութիւն ունի ներումը։ Արդեօք նա բաւականութիւն կը տա՞յ այն անձանց, որոնք բաժանված զանազան բանակների պաշտպանում էին մեղադրողների կամ մեղադրվածների կողմը։ Արդեօք նա կը դոհացնէ՞ ֆրանսիական ազգաբնակութեան այն մեծամասնութիւնը, որ կատարում էր հանդիսատեսի դեր և սպասում էր արդարադատութեան վերջնական խօսքին՝ ճիշդ դաղափար կազմելու նրա առաջ կատարված դրամայի մասին։

Ներումը ունի, անկասկած, մի դրական կողմ, այդ այն է, որ նա վերացնում է դատվողների անձնական զրկանքի հարցը և դրանով հանդստացնում մարդկանց կրքերը։ Արդարև, երբ որ հասարակութեան ասում են, թէ անմեղ տեղը մարդիկ նըստած են բանտում և կրում են անձնական զրկանքներ, այդպիսի դէպքերում հասարակութիւնը անկարող է հանգիստ լինել և նա պէտք է վրդովվի ու յուզվի, մինչև որ կարողանայ զուր տեղ վնասվողներին փրկել հալածանքից և զրկանքներից։ Եւ երբ հասարակութիւնը կարողանում է այնպէս անել, որ զուր տեղը մարդիկ զրկանքներ և վնասներ չը կրեն, նա հանդստանում է։

Սակայն մի բան կայ, մի մեծ խնդիր, որին օգնել չէ կարող ներումը, դա պատուի հարցն է, դա արդարադատութեան հարցն է։ Զը կան ֆիզիքական զրկանքներ, բայց մնում են բարոյական կասկածներ, արատաւոր ենթադրութիւններ։ Մընում է հասարակական կարծիքի մէջ անորոշութիւն, որ շատ անգամ նոյնքան ծանր է, որքան բացարձակ մեղադրանքը։

Ֆրանսիական ազգը նայում է ներկայ ներման վրա, իբրև հայրենասիրական մի անհրաժեշտութեան վրա։ Պէտք է, ասում են, ֆրանսիական ազգը հանդստանայ մի քանի տարի շարունակվող կատաղի յուզմունքներից, որպէս զի ընդունակ լինի զբաղվել իր ներքին և արտաքին լուրջ խնդիրներով և անձնատուր լինել հերթական դարձած բարեփոխութիւնների իրագործութեան։ Այդ գործնական անհրաժեշտութեան դաղափարը թելադրեց դնել ներման հարցը և հրովարտակը հրատարակվեց։ Հասարակական ընդհանուր տրամադրութեան մէջ տիրեց հանդստութիւն, բայց դեռ շուտով չէ կարող մոռացվել այն տխուր փաստը, որ ֆրանսիական ազգը անկարող եղաւ դատաստանի միջոցով պարզել արդարադատութեան վերաբերեալ խնդիրները և ստիպված եղաւ հայրենասիրութեան դրօշակի տակ ընդհանուր ներման հրովարտակով լուծել դատաստանական Գօրդեան հանգոյցը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Որ հայ ազգի նոյն իսկ կրթված դասակարգը դեռ չէ դուրս եկել ասիականութեան այն չըջանից, որ դալայլամայականութիւն է ստեղծել,—այդ կարելի է խմանալ մի շարք հասարակ գործերից։ Այսպէս, մեզանում քննադատութիւնը դեռ հակացվում է թշնամութեան ժաքով. քննադատեցէք մի հիմնարկութիւն, մերկացրէք նրա վատ կողմերը,—եւ ձեզ կասեն թէ դուք այդ հիմնարկութեան կատաղի թշնամին էք, թէեւ դուք ամբողջ սրտից կամենում էք նրա լաւութիւնը եւ հէնց այդ պատճառով էլ քննադատում էք։ Վերցրէք մի ուրիշ դէպք։ Հայից չէ կարելի հաշիւ պահանջել, որովհետեւ դա, հայկական հասկացողութեամբ, վիրաւորական բան է. երբ հայը ուտում է ազգասիրաբար—դա առաքինութիւն է. իսկ երբ նրանից հաշիւ էք պահանջում—դա դառնում է դաւաճանութիւն, մատնութիւն եւ այլ այնպիսի յանցանքներ, որոնք նոյն իսկ ժամադրքի «Մեղայի» մէջ էլ չը կան։ Ցիշում էք ինչ վայնասուն եւ առանների կրճատումն բարձրացաւ մեր մէջ, երբ «Արարատը» 1894-ին մի քիչ լոյս գցեց Էջմիածնի հաշիւների վրա։ Ամեն անգամ, երբ մենք խօսք էինք բաց անում, թէ Էջմիածինը, փոխանակ իր դատարկ սնդուկը ողբալու, լաւ կանէ, որ իւրաքանչիւր էջ, սպասում է սեւ ժահին, որը իր անգութ մանգաղով հնձում է հարիւրաւոր, հազարաւոր նորաբոյս կեանքեր։

Եւ ժահը անխնայ հնձում է մատաղ տունկերը, ու հնձում է մեր լաւ, անարատ տունկերը, որոնք դեռ չեն ստացել օտար պատուաստ—այսինքն. գաւառի, գիւղի ծաղիկները, հայ անդաստանի ապագայ յոյսը։ Քրտինքով, ահագին զրկանքներով խեղճ գեղջուկը մնուցանում ու մեծացնում է իր երեխային, իր ապագայ յոյսը, իր օջախի ճրագը։ Եւ մի օր քութէշը կամ դիֆտերիտը, ծաղիկը կամ տիֆը, կարմրուկը կամ ինֆլուէնցան յանկարծ ոչնչացնում է ամեն ինչ, ամայի դարձնելով գիւղացու տունը ու նրա սիրտը։ Գոնէ զոհը մէկը լինէր, գոնէ անողորմ ցաւը խնայէր միւս երեխաներին. այդ մեծ մխիթարութիւն կը լինէր։ «Մէկին Աստուած տարաւ, փառք իրան, միւսներին խղճաց»։ Բայց յաճախ մի զոհով չէ բաւականանում քութէշը, եւ փոքրիկ դաղաղները մէկը միւսի ետեւից դուրս են տարվում այս վէրան դառած խրճիթից։

Սուգ ամեն կողմ։

Եւ այս կոտորածը կրկնվում է ամեն տարի տարբեր ոյժով զանազան տեղեր։

Ո՞վ կարող է հաշվել զոհերի թիւը։ Զէ՞ որ մեռնող երեխան տանում է իր հետ մի նոր սերունդ, մի տան ապագան. իսկ նիւթական վնասը. կորչում է տան ապագայ «աշխատողը», անհետանում է մշակը։

—

Շատ ենք գրել, զգուշացրել, որ այդ հիւանդութիւնները վարակիչ են եւ մի առ մի թելել ենք այն զգուշութիւնները, որ պէտք է ձեռք առնել երեխային վարակումից ազատ պահելու համար։ Շատ անգամ աշխատել ենք ցրել այս կոտաբեր, տխմար մնապաշտութիւնը, թէ վարակիչ հիւանդութիւնները Տիրամօր տուածն է, «խէչից» է, «ման ածող ունի» եւ այլն։ Զգուշացրել ենք նոյնպէս այն սպանիչ բուժական միջոցի դէմ, որը կայանում է տիֆով, դիֆտերիտով, քութէշով հիւանդին սրբերի դուռը տանելում։ Խորհուրդ ենք տուել երեխաներին առանց պատուաստի չը թողնել, որպէս զի չը կոտորվեն նրանք ծաղիկից, կամ (ամենայաջող դէպքում) չը կուրանան։ Խօսել ենք եւ շատ ուրիշ առողջապահական կանոնների մասին...

Բայց ո՞վ է լսողը, ո՞վ է այդ մտքերը անդրադէտ, գեհենի ամբոխի մէջ տարածողը, ո՞ւմ հոգն է, ո՞վ է զգում իր հոգու խորքերում պահանջ օգնել խեղճին ու տգէտին, փրկել անպաշտպան մանուկին։

Դարձեալ կը գրենք, դարձեալ կը քարոզենք...

Բայց անզօր է մի լրագրական յօդուած այս ահագին ցաւերը բուժելու համար, անկարող են Թիֆլիսում նստած բժիշկները ժողովրդի աչքերը բանալ, եթէ նրանց ձայնը արձագանք չէ գտնում ժողովրդի, իսկական մասսայի մէջ ապրող ու գործող բանիմաց մարդկանց սրտերում։

Եւ կան այդպիսի մարդիկ, ամեն տեղ կան։ Ի՞նչ մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին նրանք, եթէ աջակցէին մեզ այս դժուար գործում,—եթէ մտցնէին ժողովրդի մէջ վարակման գաղափարը եւ նրա դէմ գործադրելի պաշտպանողական միջոցները, մի խօսքով, եթէ դառնային միջնորդ բժիշկների ու ժողովրդի մէջ, այն ժողովրդի, որին նրանք մեղանից լաւ են ճանաչում եւ որի հետ խօսել գիտեն։ Ինչ վսեմ հոգեկան բաւականութիւն պիտի զգան նրանք, եթէ աջողվի գոնէ մի երեխայ փրկել։ Իսկ մենք համոզված ենք, որ շատերին կը փրկեն, եթէ կամենան։

Մենք, բժիշկներս, միշտ պատրաստ ենք օգնելու նրանց մեր խորհուրդներով, եթէ դիմեն մեզ գրաւոր կերպով եւ ուրախութեամբ կըտանք պահանջած ցուցմունքները։

—

Հարկաւոր է լաւ ըմբռնել վարակման դաղափարը։

Այն սարսափելի հիւանդութիւնները, որոնք անխնայ հարուածում են մանուկներին, հետեւեալներն են.—քութէշը կամ սկարլատինան, դիֆտերիտը, ծաղիկը, ջրծաղիկը, կարմրուկը, կապոյտ հազը կամ կոքլիւշը։ այս հիւանդութիւնները յայտնի են բժշկականութեան մէջ սրընթաց-վարակիչ անունով։ Սրընթաց կոչվում են նրանք, որովհետեւ նրանց ընթացքը սարսափելի արագ է լինում. կան դէպքեր, երբ երեխան մի օրվայ, նոյն իսկ մի քանի ժամվայ մէջ կորչում է (քութէշ, դիֆտերիտ)։ Այն ինչ կան այնպիսի հիւանդութիւններ, որոնք նոյպէս վարակիչ են, բայց որոնք աւելի դանդաղ են ընթանում (օրինակ բարակացաւը, տիֆը)։

Վարակիչ նշանակում է մէկից միւսին՝ հիւանդից առողջին փոխվող։

Ամենքը գիտեն, որ երբ մի քաղաքում քութէշ կամ կարմրուկ, կամ դիֆտերիտ կայ, երեխաները միմեանցից կպչում են, այսինքն. հիւանդ երեխան իր ցաւը տալիս է առողջին եւ այս ձեւով վարակիչ հիւանդութիւնները տարածվում են գիւղերում ու քաղաքներում եւ կարող են բռնել մի ամբողջ երկիր։

տարի հաշիւ տայ ազգին, մեզ դէմ բարձրանում էր հայկական դալայլամայականութիւնը, որ մեզ դէմ հնարեց նոյն իսկ այն կլասիկական տխմարութիւնը, թէ էջմիածինը մեր հայրն է, իսկ հայրը պարտաւոր չէ իր որդիներին հաշիւ տալ։ Հայը հայ է ամէն տեղ։ Ինչպէս, օրինակ, Երուսաղէմի վանքում հարկաւոր են համարում ամենից առաջ ու ամենից շատ ծամագիրք տպել, այնպէս էլ Մանչեստրում ապրող հայը հարկ է համարում դարձեալ ծամագրքի մասին մտածել ու գրել։ Եւ ինչպէս մեզանում հաշուետուութեան պահանջը աղմուկ ու աղաղակ է բարձրացնում, այնպէս էլ ներկայ ժամանակ Երուսաղէմի միաբանութիւնը տակն ու վրա է դառել այն պատճառով, որ մի քանի միաբաններ պահանջել են հաշիւ տալ։ Այս մասին գրել էր «Մշակի» թղթակիցը, այս մասին խօսեց «Մշակում» Վրձինը։ Մեզ համար հարցը պարզ է եւ եզրակացութիւնը—մի հատ։ Բայց ինչ են ասում Կ. Պոլսում, թիւրքահայերի այդ մտաւոր կենտրոնում։ Ահա ինչ է գրում «Սուրհանդակը».

«Պաշտօնակից մը՝ «Փունջ», իր վերջին թիւին մէջ, դարձեալ լուտանքներ կը տեղայ Երուսաղէմի այն միաբաներուն գլխուն, որոնք անքաւելի մեղք մը գործեր են, պահանջելով որ վանքի տարեկան հաշիւները միաբանական ժողովին ներկայացուին, ինչպէս կը տրամադրէ իրենց ներքին կանոնագիրը։ Մեր պաշտօնակիցը կերեւայ որ մոռացած է, թէ ասկէ առաջ քանի քանի անգամներ ինքն իսկ իր սիւնակներուն մէջ զանազան առիթներով հաստատուութեան սկզբունքը պաշտպանած եւ օրէնքին ոգւոյն գործադրութիւնը պահանջած է։ Զարմանալի չէ ուրեմն, երբ հիմա կելլէ կըսէ թէ՝ «Պէտք չէ կարեւորութիւն տալ օրինական կամ լաւ է ըսել փարիսական կեղծաւորատիր նախանձախնդրութիւններու»։ Հարկ չկայ ըսելու, որ Երուսաղէմի պատրիարքը ընդհանուր ազգին ծանօթ եւ վստահելի եկեղեցական մէն է, բայց այսքարհի վրա ամէնէն վստահելիները եւ անկեղծներն են որ օրէնքին ո եւ է մանրամասնութենէն եւ տրամադրութենէն չեն խուսափիր։ Եւ արդէն օրէնք մը այս կամ այն անձին համար չի տրուիր։ Այն միաբանները, որոնք օրերով, ամիսներով ս. Յարութեան տաճարին, ս. Աստուածածնայ գերեզմանին, Ծննդան այրին մէջ գիշեր ցերեկ վանքին իրաւունքները կը պաշտպանեն, անոնք պէտք է աւելի լաւ հասկընան, համոզուին, որ իրենցմէ զատ ուրիշ խորհողներ ալ կան վանքի վիճակին վրա, թէ եկամուտները լաւ կը մատակարարուին եւ ծախքերը խնայողութեամբ կըլլան, թէ վանքը հասոյթի առեւելութիւն մը կունենայ, եւ այլն։ Ասիկայ միաբաններուն համար պարզ գոհացում մըն է, եւ չենք կարծեր որ ս. Երուսաղէմի պատրիարքը այսքան մխիթարութենէ մը զրկէ զիրենք։ Արժանահաւատ անձեր կը հաստատեն թէ՝ այսօր Երուսաղէմի վանքի ելմտական վիճակը այնքան կանոնաւորուած է, որ օտարներն իսկ կը գնահատեն, եւ հաւանական չէ բնաւ, որ ապագային մէջ օր մը նորէն տասնեակ հազարաւոր ոսկիներու պարտք մը վճարելու հարկին մէջ գտնուի ազգը։ Այս ամենը գիտնալով կըսենք թէ թող Այսպէս են գոյանում համաձարակները։ Ցայտնի է նոյնպէս, որ հիւանդի շորերի, անկողնի ու նրա իրեղէնների միջոցով էլ կարող են տարածվել այդ ցաւերը։

Եթէ մի առողջ երեխայ մանի հիւանդի դատարկած սենեակը, դարձեալ կարող է վարակվել։ Ի՞նչպէս պէտք է բացատրել այս երեւոյթը։

Երեւի մի բան կայ հիւանդի, նրա շորերի մէջ, նրա սենեակի յատակի ու պատերի վրա, որը մտնում է առողջի մարմնի մէջ եւ հիւանդացնում է նրան։ Ինչ է այդ բանը։

Այս հարցն է ահա, որ դարերի ընթացքում զբաղեցրել է, հետաքրքրել է բժիշկներին, եւ որը միայն մեր ժամանակներն է վճռվել։

Բժիշկները վերջապէս գտան, որ վարակիչ-տարափոխիկ հիւանդութիւնների պատճառը վերին աստիճանի մանր, աչքին աննշմարելի էակներ են։ Այս փոքրիկ էակները կարելի է տեսնել միմիայն մանրացոյցի *) միջոցով, որը մեծացնում է նրանց 200—500, մինչեւ 2000 անգամ եւ աւելի։ Վերցնում են հիւանդի արտաթորութիւնները, կամ խորխը, կամ մէզը, կամ արիւնը, մի աննշան կաթիլ դնում են խոշորացոյցի ապակու տակ ու մեծացնող ապակու միջով նայում։ Այն ժամանակ աչքի առաջ կաթիլի մէջի եղած ամենամանր մանրիկները 1000—2000 անգամ աւելի մեծ են երեւում եւ դիտողը կարող է լաւ զննել նրանց։

Վարակիչ անուանված հիւանդութիւնների պատճառը զանազան տեսակ մանր խոշորացուցական էակներ են, որոնք կոչվում են մի կ-

*) Մանրացոյցը կամ խոշորացոյցը մի գործիք է, որի միջոցով մանրադոյն իրերը մեծանում են և նըկատելի են դառնում մեր աչքին։

ռ օ բ ն ե ր, բ ա կ տ ե ր ի ա ն ե ր։

Այս միկրոբները իրանց սեփական կեանքն ունեն.—նրանք շարժվում են, կերակրվում, բազմանում ու մեռնում, ինչպէս մեծ կենդանիները։ Իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւն իր սեփական միկրոբն ունի։ Շատ հիւանդութիւնների միկրոբները գտնված են արդէն։

Այս մանրադոյն էակներն են, որ դուրս գալով հիւանդից (նրա խորխի, կղկղանքի հետ) մտնում են առողջի մարմնի մէջ եւ սարսափելի արագութեամբ բազմանալով, թունաւորում են նրա ամբողջ կազմուածքը ու հիւանդացնում։

Այս է վարակումը։ Տեսնենք, թէ ինչ ճանապարհով է կատարվում վարակումը։ Որպէս զի վարակումն տեղի ունենայ, անհրաժեշտ է ուրեմն, որ որոշ հիւանդութեան (օր. քութէշի) միկրոբը մտնի առողջ երեխայի մարմնի մէջ։ Ի՞նչ ձեւով կարող է կատարվել այդ։ Կամ խառնվելով ուտելիքին ու խմելիքին, կամ օդի միջով։

Մի առողջ երեխայ ապրում է հիւանդի հետ մի եւ նոյն սենեակում։ Միկրոբը կարող է ընկնել նրա կերակրի, նրա ջրի մէջ ու մտնել նրա ստամոքսը, որտեղ կաճի, կը տարածվի ամբողջ կազմուածքի մէջ ու կը հիւանդացնէ այդ առողջ երեխային։ Նոյն միկրոբը կարող է չորանալ, խառնվել փոշուն եւ մտնել առողջ մարդու քիթը, բերանը, թոքերը։

Վարակումն կատարվում է մի ուրիշ միջոցով եւս։ Հիւանդի թոքը, խորխը կամ նրա արտաթորութիւններից մի կաթիլ ընկնում է նրա անկողնի, շորերի, խաղալիքների, գրքի, վերջապէս, մի որ եւ է առարկայի վրա ու չորանում—մնում։

Այդ անկողնի մէջ պառկում է, կամ հագուստը հագնում, կամ խաղալիքներով խաղում ու գիրքը կարդում մի առողջ երեխայ եւ վարակվում, ներս շնչելով կամ կուլ տալով աներեւոյթ միկրոբները։ Հասկանալի է, որ այդ իրեղէնները կարող են իրանց հետ տանել միկրոբը մի քաղաքից միւս, մի երկրից մի ուրիշ երկիր եւ այնտեղ վարակման նոր բուն կազմել, որտեղից հիւանդութիւնը կը տարածվի այս նոր տեղերը։ Եւ, ճշմարիտ որ, այս ձեւով հիւանդութիւնը կարող է շատ հեռու տեղեր թռչել։ Երեւակայեցէք, օրինակ, մի հայր, որ Թիֆլիսում մի հագուստ է գնում «եարմարկայում», ու տանում իր գիւղը իր երեխային հագցնում։ Մի քանի օր երեխան երջանիկ է. յանկարծ, մի երկու-երեք օրից յետոյ, նա հիւանդանում է քութէշով ու մեռնում։ Ի՞նչ էր պատճառը։ Անտարակոյս այդ հագուստը վարակված է եղել։

Դուք փոխվում էք մի նոր բնակարան, որտեղ առաջ քութէշի կամ դիֆտերիտի դէպք է եղել, եւ ձեր երեխան մի քանի օրից յետոյ հիւանդանում է. ի՞նչ պատահեց։ Սենեակի յատակի, պատերի վրա, անկիւններում, փոշու մէջ մնացած էին միկրոբներ, որոնք եւ վարակում են ձեր երեխային։ Եթէ վարակումն կարող է կատարվել եւ իրերի միջով, նա կը կարատվի նոյնպէս եւ մարդկանց միջոցով։ Մի տան մէջ վարակիչ հիւանդ կայ, դուք գնում էք նրան տեսութեան, նստում էք—խօսում, ձեռք տալիս հիւանդին, գուցէ եւ համբուրում եւ հետներդ տուն բերում մեկրոբներ ու վարակում ձեր երեխաներին, թէեւ դուք ինքներդ չէք էլ հիւանդանում։

—

Ասածներից պարզ է, թէ ինչ միջոցներով կարելի է փրկել երեխաներին վարակումից։

Մի թոյլ տուէք ոչ մի յարակցութիւն հիւանդի հետ, նրա մտերիմների, նրա իրեղէնների հետ։ Մի խօսքով բոլորովին կտրեցէք ձեր կապը հիւանդի հետ։

Այս է սկզբունքը։

Մանրամասնութիւնները ակներեւ են, եթէ լաւ հասկացել էք վարակման ձեւերը *), բայց դարձեալ կասենք, որպէս զի ամէն բան պարզ լինի։

Եթէ քաղաքում կամ գիւղում յայտնվել է մի որ եւ է վարակիչ հիւանդութիւն, պէտք է կրկնապատկել երեխաների վրա ունեցած հսկողութիւնը։ Մի թոյլ տաք, որ նրանք մտնեն այնպիսի տներ, որտեղ կասկածելի հիւանդներ կան եւ խաղան այդ տնեցի երեխաների հետ։ Դուք ինքներդ չը մտնէք այդ տները եւ ոչ ոքի ու ոչ մի բան չընդունէք այնտեղից։

Այսպէս առանձնացրէք ձեր երեխաներին ու ձեր ամբողջ տունը։

Բայց եթէ հիւանդութիւնը ձեր տունն է ընկել, այսինքն. եթէ ձերոնցից մէկը արդէն հիւանդացել է, ի՞նչ պէտք է անէք։

Պէտք է աշխատէք փրկել ձեր միւս երեխաներին,—պէտք է զատէք հիւանդին առողջներից։

Դրա համար երկու միջոց կայ. կամ հիւանդին ուղարկեցէք հիւանդանոց (եթէ կայ), կամ առողջներին հեռացրէք տնից մինչեւ հիւանդի լաւանալը, տանելով նրանց մի ուրիշ տուն, կամ գոնէ ուրիշ սենեակներ։

(Կը շարունակվի)

*) Տես իմ «Առողջապահութիւն առողջ երեխաների» գրքոյկը, գլ. Հ.

մարքի հաշիւ միաբաններու պահանջած հաշիւը իրենց ներկայացուի, քանի որ ոչ ծածկելիք գեղծում մը կայ, ոչ ալ պարակուելիք գաղտնիքը մը։ Մեզի համար ոչ Երուսաղէմի խնդիր կայ եւ ոչ Պոլսոյ. սկզբունքը մը կայ մէջտեղը, թէ այն որ հանրային գրամ մը կը մատակարարէ կամ գործ մը կը կառավարէ, պէտք է իր համարատուութիւնը ներկայացնէ։ Ասոր պէտքը զգացնել «փարիսական նախանձախնդրութիւն» չէ, իսկ հակառակը պնդելը բաւական ձախող փաստաբանութիւն մըն է, եւ մինչեւ հիմա ընդունուած եւ գործադրուած կանոններուն կը հակառակի, որուն հիմնադիրները հարկաւ մեզմէ աւելի հեռատես եւ շատ աւելի փորձառու էին։

Որ հինաւուրց «ազգային» եւ Բարթուղիմէոս Զամիչեանի հոս սպասաւոր Համբարձում էֆէնդի Ալաճաճեան իր «Փունջի» մէջ փարիսեցիութիւն է համարում հաշիւ պահանջելը—այդ բնական է թէ նրա եւ թէ նրա կովկասեան արժանաւոր դասակիցների համար։ Բայց սկզբունքը ճիշդ ըմբռնած «Սուրհանդակն» էլ հարկաւոր է համարել նախ լաւ շոյել Երուսաղէմի պատրիարքի գլուխը եւ ապա ասել, թէ այդ հաշիւը միաբանների «պարզ գոհացման» համար է։ Ո՛չ. ինչու այդպէս դատել։ Միաբանութիւն, պատրիարք ազգի պաշտօնեաներ են եւ նրանք պարտաւոր են ծանօթացնել ազգը իրանց յանձնած գործերի հետ կանոնաւոր եւ մանրամասն հաշիւների միջոցով։ Մեր եկեղեցին միապետական հիմքեր չունի, նա լայն ընտրողական սկզբունքների վրա է առաջ տարել իր գործերը։ Իսկ ուր կայ ժողովրդական քուէ, այնտեղ առաջ է գալիս բնական անխուսափելի պարտականութիւն—հաշուետուութիւն։ Ինչու, հարցնում ենք, Եւրօպայում ազգային ժողովները հաշիւ են առնում եւ հաշիւ են տալիս իրանց ընտրողներին, իսկ մեզ մօտ մի պատրիարք, որին նոյն ընտրողական քուէն է կանչում պաշտօնի, վիրաւորական պիտի համարէ իր ընտրողներին հաշիւ ներկայացնելը։ Ուրիշ պատճառ չը կայ, բացի հայկական դալայլամայականութիւնից...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXIX

Հայը «մանր է ծնվել, մանր է մնվել եւ մանր է մեծացել», գրում է «Մշակի» թղթակիցը Բոլգարիայից (№ 243)։

Մենք մանր մարդիկ ենք,—գրում է պ. Գր. Զալխուշեան Նոր-Նախիջեւանից (№ 238)։

Եւ չը կայ մի հայ, որ ձեռքը խղճի վրա դրած չը խոստովանի, որ աշխարհումս դժուար է գտնել աւելի մանր, աւելի մանրակրկիտ, աւելի փոքրոգի մարդիկ, քան հայերը։

Վերցնենք հէնց Բոլգարիայի թղթակցի նկարագրած դէպքը, որ նոյնքան բնորոշ է մեր բարքերի համար, որքան եւ խայտառակ ինքն ըստ ինքեան։

Երկնքի բոլոր պատուհասները իջնում են մի ժողովրդի գլխին։ Սոված, ծարաւ, ծնող ու զաւակ, այր ու կին, քոյր ու եղբայր իրար կորցրած նրանք ցրվում են աշխարհիս չորս կողմը, փոթորկից տարված տերեւների նման, եւ ահա այդ «թափառական հրէաներից» մի խումբ ընկնում է Բոլգարիայի Ֆիլիպօպոլ քաղաքը։ Բոլգար կառավարութիւնը ընդունում է նրանց, ինչպէս պէտք է ընդունել թշուառ պանդուխտներին,—հովանաւորում է նրանց։ Ուրեմն կարելի է վերջապէս հանգստանալ, շունչ քաշել։ Բայց չէ։ Ի՞նչպէս զսպէ հայը իր մանր կրքերը։ Արսէն վարդապետից դժգոհ են։ Բողոքում են։ Պատրիարքարանը արգելում է Արսէն վարդապետին ծիսակատարութիւն անել։ Արսէն վարդապետը ոտնատակ է տալիս իր իշխանութեան հրամանը։ Ժողովուրդը վրդովվում է։ Ազաները պաշտպանում են ըմբոստ վարդապետին։ Եկեղեցու բակում սկսում են իրար գլուխ ջարդել, եւ երեսուն հայ պանդուխտներ, բոլգար ազգի թշուառ հիւրեր, ենթարկվում են դատի Ֆիլիպօպոլում յամօթ ամբողջ հայ ազգութեան։

Տանջանքը աղնւացնում է մարդկանց, տանջանքը լրջութիւն է տալիս մարդկանց, տանջանքը սովորեցնում է արհամարհել մանրը, փոքրոգին,—բայց հայի համար չէ ասված այդ բանը։ Ամենամեծ տանջանքից, որից ուրիշը դուրս կը գար վերածնված, հայը անարատ դուրս է բերում իր մանր ցանկութիւնները, իր մանր ձգտումները, իր մանր նախանձը, մանր ատելութիւնը, մանր ոխակալութիւնը, մի խօսքով իր ամբողջ մանր, նեղ, սահմանափակ ոգին։

Մեր ճակատի նզովքն է այդ մանրութիւնը, որի կնիքն են կրել դարերի ընթացքում եւ շարունակում են մինչեւ այժմ կրել մեր հոգու բոլոր արտայայտութիւնները, մեր բոլոր գործերը։

Պէտք է վերջապէս հասկանանք այդ։ Կարող ենք արդեօք հասկանալ։

Դրանից է կախված մեր ամբողջ ապագան, որովհետեւ մանր մարդկանց համար տեղ չը կայ աշխարհումս եւ, ճիշդն ասած, շատ էլ ցանկալի չէ, որ մանրահոգի մարդիկ տեղ բռնեն աշխարհումս։

Տ. Ե.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 21-ին

Կամենալով ժամանցոյց անել Բագուի եկեղեցում տիրող մի քանի տգեղ սովորութիւնները եւ այդ եկեղեցին յաճախող ժողովրդի սառն եւ անտարբեր վերաբերմունքը, յիշեցի «Մշակի» № 239-ի մէջ տպված պ. Զալխուշեանի «Թանգ ապրանք» վերնագրով գեղեցիկ յօդուածը։

Եթէ պ. Զալխուշեան կիրակի օրը մտնէր Բագուի հայոց եկեղեցու բակը, կը տեսնէր, որ «փիսացուներ, լաւ, ինտելիգէնտ, հայրենասէր փիսացուներ» միայն Նոր-Նախիջեւանին չեն վիճակված. մեր քաղաքն եւս զուրկ չէ այս գոհարներից։

Անծանօթը, եկեղեցու մօտով անցնելիս, տեսնում է խուռն բազմութիւն, որի ստուար մեծամասնութիւնը կազմում են վերջին մօդայով հագնված երիտասարդներ, եւ զարմանում է։ «Ո՞րքան աղօթողներ...», ասում է ինքն իրան անծանօթը։ Բայց նա չը գիտէ, որ այդ պարոնները հեռու են աղօթելու մտքից, այլ միայն հաւաքվել են ուշի ուշով զննելու այն պճնված տիկիններին եւ օրիորդներին, որոնք դիտմամբ խմբվել են եկեղեցու դաւթում։ Երիտասարդներից իւրաքանչիւրը աշխատում է ցոյց տալ, որ ինքն է ընդհանուրի ուշադրութեան առարկան, որ ինքը միայն կարող է «լաւ փիսացու» լինել,

Այդպէս ձեւանալու համար կայ մի լաւ միջոց, այն է՝ այլազգի բառերով մի քանի սովորած խօսքեր կամ ֆրազներ արտասանել։ Դա նշան է, որ նա եղել է արտասահմանում, հետեւապէս եւ չէ պատկանում հասարակ մահկանացուների թւին։ Մայրենի լեզուով խօսելը տգիտութեան նշան է, ամօթ եւ նախատինք է «ինտելիգէնտ փիսացուի» համար։ Մեր կրթված եւ լուսաւորութեան հոտն առած «հարսնացուները» յետ չեն մնացել «փիսացուներից»։ Մայրենի լեզուն հալածված է թէ փողոցում, այգում, թատրոնում, եկեղեցում եւ թէ ընտանեկան յարկի տակ։ Հասարակ դասակարգի «հարսնացուները» աշխատում են նոյնպէս յարմար դէպքում կրկնել սովորած օտար լեզուով խօսքեր, իրանք եւս չը հասկանալով նշանակութիւնը. Զէ որ օրինակը վարակիչ է։

«Հայրենասէր փիսացուների» կարիք նոյնպէս չէ զգացվում Բագուում։ Տասն օր սրանից առաջ թուղթ էին պատեցնում փող հաւաքելու մի չքաւոր ուսանողի օգտին, որին համալսարանից հեռացնելու վտանգ էր սպառնում ուսման վճարը չը տալու պատճառով։ Նաւթային ամենայայտնի ֆիրմաների կառավարիչ «հայրենասէր փիսացուները» իրանց սուղ միջոցներից չը կարողացան օգնել ուսանողին, այդ պատճառով դիմեցին հարուստներին, որոնք իրանց առատ նուէրներով թէ հաւաքեցին մի պատկառելի գումար եւ թէ «Кассій» լրագրում արժանացան շնորհակալութեան։ Եւ այդ պատկառելի գումարն էր, որքան էք կարծում... 52 ռուբլի։

Խօսելով եկեղեցու մասին, ամենից առաջ պէտք է ասենք, որ Բագուի պէս բազմամարդ քաղաքում բաւական չէ մի եկեղեցի եւ մի մատուռ ունենալ։ Թէեւ նոր կառուցվելիք եկեղեցու համար կազմված է յատակագիծ, բայց հազիւ թէ շուտով կանգնած տեսնենք այդ եկեղեցին, որովհետեւ շինութեան համար փող է հարկաւոր։ Ժողովրդի չքաւոր դասակարգը միջոց չունի, իսկ հարուստները աղօթում են թէ հասարակ եւ թէ հանդիսաւոր օրերը նաւ-

թ, վիչկայում... որը կանգնեցնվում է երկու օրվայ ընթացքում։

Եկեղեցին չունի երգեցողներ, թէեւ կաղմակերպել կանոնաւոր երգեցիկ խումբ միլիոնների աշխարհում դժուար գործ չէր։ Խումբը բաղկացած է զանազան ուսումնարաններից հաւաքված յօժարակամ աշակերտներից։ Ժամերգութիւնը զուրկ է ներդաշնակութիւնից։ Մեղմ ձայներ երբէք չեն լսվում։ Ամեն մի երգող աշխատում է իր ձայնը ջոկել ընդհանուրից։

Ներս մտնել եկեղեցի, իրար հետ բարձրաձայն խօսել առօրեայ կեանքից, ծիծաղել, հրուհրուալ, անց ու դարձ անել այս ու այն կողմը առանց նպատակի, մէկ մէկի հրել առաջ կամ յետ անցնելու մտքով, «ողջոյնի» ժամանակ հեգնօրէն ծիծաղել եւ իրար ականջին փսփսալ, ննջեցեալի դագաղի վրա աղաղակ եւ սուր ճիչ բարձրացնել,—այս բոլորը կազմում են Բագուի եկեղեցու առանձնայատկութիւնները։

Մէլիք

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Դեկտեմբերի 7-ին

Ով անցել է Վաղարշապատից դէպի Երեւան տանող ճանապարհով, նա անշուշտ կը յիշէ Զուարթնոց եկեղեցին, որ գտնվում է նոյն ճանապարհի արեւելեան կողմում եւ յայտնի է հասարակութեան մէջ խանգարած եկեղեցի անունով։

Դարերի ընթացքում հողն ու աւազը կուտակվելով այդ շինութեան շուրջը, դարձրել էին նրան մի բլուր, որից դուրս ցցված վիթխարի բեկորները միայն, չը խոնարհվելով հողմի առաջ, զարմացնում էին անցորդներին եւ գուշակել տալիս, որ եկեղեցին չէնքի կողմից բաւական ընդարձակ եւ չքեղ դիրք է ունեցել։ Ո՞վ էր ուշադրութիւն դարձնում այս աւերակ եկեղեցու վրա։ Համարեա թէ ոչ ոք, չը նայած որ վկայութիւններով յայտնի էր վաղուց, որ սա մի հոյակապ եկեղեցի է եղել՝ 632 թ. շինած եւ այստեղ են ամփոփված Գրիգոր Լուսաւորչի մասունքները։

Առաջին անգամ այս պատմական աւերակների վրա լուրջ կերպով ուշադրութիւն դարձրեց Խաչիկ վարդապետ Դատեան եւ այս տարվայ գարնանից սկսեց պեղումներ կատարել։ Վարդապետի աշխատութիւնը պակվեց աջողութեամբ, եւ որովհետեւ եկեղեցու պեղումները համարեա թէ վերջացած են, ուստի կարեւոր է ծանօթացնել հայ հասարակութեան այն հետեւանքների հետ, որ ունեցաւ Խաչիկ վարդապետը իր ութ ամսվայ պեղումների ընթացքում։ Եկեղեցին շինված է կրկնակի շրջանաձեւ մակարգակով, որի մեծ կամ դրսի շրջանի երկարութիւնն է աւելի քան 52 սաժէն, իսկ փոքր կամ ներսի խաչաձեւ շրջանի երկարութիւնը՝ մօտ 35 սաժէն։ Մեծ շրջանը շինված է տաշած քարից եւ ունի հինգ դռան տեղ։ մէկը՝ արեւմուտքից, երկուսը՝ հիւսիսից եւ երկուսը՝ հարաւից, իսկ փոքր շրջանը շինված է չորս հաստահեղուս, չորս արծուանիստ եւ 24 այլ սիւներից։ Սիւների մեծութեան մասին գաղափար կազմելու համար, բաւական է իմանալ, որ սրանց գլխաքարերը, որոնցից չորսի վրա փորագրված են չորս թեւատարած արծիւներ, երկուսի փետուրները դուրս ցցված եւ երկուսինը խոր ընկած, իսկ մնացածները գեղեցիկ քանդակագործած, ունեն 2 արշին երկարութիւն, 1 արշին 8 վերշոկ լայնութիւն եւ 1 արշին 5 վերշոկ հաստութիւն։ Եկեղեցին ունեցել է պատարագ մատուցանելու հինգ սեղան. աւագ սեղանը շինված է փոքր շրջանի արեւելեան կողմում, իսկ մնացած չորս սեղանները շինված են չորս հաստահեղուս սիւների առաջ՝ դէպի հիւսիս-արեւելք, հիւսիս-արեւմուտք, հարաւ-արեւելք եւ հարաւ-արեւմուտք։ Աւագ սեղանի վրա, դէպի աջ, գեղեցիկ քանդակաձեւ քարերով շինված է գ ղ ր ո ց ը, ուր, պատմաբանների վկայութեամբ, պահվել է Գրիգոր Լուսաւորչի գլուխը։ Աւագ սեղանի ետեւ գտնված է մի մեծ քարից շինած խաչաձեւ աւազան, որ ունի 2 արշին երկարութիւն, նոյնքան լայնութիւն եւ $1^1/_2$ արշին խորութիւն։

Պեղումների ժամանակ գտնված հնութիւնների մէջ առաջին տեղը բռնում է 47 տողից բաղկացած սեպաձեւ արձանագրութիւնը, որ փորագրված է որձաքարի վրա, որի երկարութիւնը 3 արշին 14 վերշոկ է, լայնութիւնը 14 վերշոկ եւ հաստութիւնը 8 վերշոկ։ Երկրորդ տեղը բռնում է մոզայիկ խաչը, զարդարված գոյնզգոյն քարերով։ Երրորդ տեղը փորագրած փայտէ փոքրիկ խաչը, շրջապատած արծաթով։ Սրա մասին սակայն տարածված է լուր, որ, իբր, այս խաչը ոչ թէ գտնված է պեղումների ժամանակ, այլ Խաչիկ վարդապետը բերել է իր հետ Պարսկաստանից։ Կասկածը փարատելու համար կարեւոր է վարդապետի բացատրութիւնը։ Պատերի եւ քարերի վրա գտնվել են յիշատակութիւններ՝ հայերէն, յունարէն, ասորերէն, արաբերէն եւ վրացերէն լեզուներով գրված մեխով, արճիճով եւ ածուխով։

Դրասխանակերտցի Յովհաննէս կաթողիկոսի վկայութիւնից յայտնի է մեզ, որ Ներսէս Ш-դ կաթողիկոսը, Զուարթնոց եկեղեցին շինելիս՝ հիմքում ամփոփել է Լուսաւորչի մասունքները «ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից առ ի անշուշտ մնացականութեամբ պահել զանձուն երկնաւորի ի գերչաց ապականչայց»։ Սակայն աւանդութեամբ յիշատակված է նաեւ, որ Գրիգոր Լուսաւորչի նշխարները, Զենոն կայսրի հրամանով, բռնութեամբ տարվել են Բիւզանդիա *)։ Ահա այս եւ սրանց հակառակ զանազան այլ վկայութիւններ ստիպում են Խաչիկ վարդապետին քանդել հաստահեղուս սիւներից մէկը, որ խանգարված է եղել աւելի, քան միւսները, որպէս զի կարելի լինի եկեղեցու մասին գտնված վկայութիւնը պարզել ճշտութեամբ։ Հետեւանքը լինում է այն, որ հաստահեղուս սիւնի հիմքի տակ, $^1/_2$ արշին գետնից խոր, մէկ մեծ քարի տակ հողի վրա դրած գտնում է երկու կոտոր ոսկոր։

Լուսաւորչի նշխարների գիւտը կայծակի արագութեամբ տարածվեց թէ Վաղարշապատում եւ թէ շրջակայ գիւղերում եւ ժողովուրդը, որ արտասրոփ սպասում էր այդ գիւտին, չատպեց դէպի եկեղեցին համբուրելու մասունքը եւ մոմ վառելու նրա առաջ։

Եկեղեցու վերաբերմամբ պեղումները մասամբ վերջացնելուց յետոյ՝ Խաչիկ վարդապետը սկսեց վեհարանի եւ միաբանական սենեակների պեղումները, որոնք թէեւ ուշ սկսվեցին եւ ցրտերի պատճառով այժմ դադարած են, սակայն ամբողջ բլրի մեծութիւնը վկայում է, որ եկեղեցու գաւիթը վեհարանի եւ միաբանական սենեակների հետ միասին կունենայ աւելի քան 3 դեսեատին տարածութիւն։ Բացի եկեղեցուց մաքրված են՝ դէպի վեհարան տանող գլխաւոր մուտքը, մուտքի աջ եւ ձախ կողմերի պահապանների սենեակները, թոնրատունը եւ այլ սենեակներ, որոնցից մէկի մէջ գտնված է գետնի տակ թաղած հողէ մի դատարկ կարաս եւ մէկ հոր, մէջը լիքը մի տեսակ թեփով, որ ենթադրվում է թէ կորեկի թեփ է։ Իսկ եկեղեցուն կից, դէպի արեւելք, շինված է խորանը, ուր գտնվել են հողէ ամաններ, մէջը քարացած ձէթով։

Գովելի է Խաչիկ վարդապետի եռանդը, որ չը նայած իր սուղ միջոցներին եւ ժողոված դրամական չնչին նուէրներին, այնուամենայնիւ վճռել է պեղումները շարունակել եւ առաջիկայ 1901 թ. ընթացքում հրապարակ հանել VII դարում շինած հայկական եկեղեցու բիկորների հետ նաեւ նոյն դարից մնացած վեհարանի ու միաբանական սենեակների մասերը։

Ա. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, դեկտեմբերի 12-ին

Խնդրեմ չը մերժէք տպագրել այստեղի նոր բացվող գրադարան-ընթերցարանի օգտին իմ առած ներկայացման հաշիւը։

Տոմսակներից ստացվեցին 230 ր. 95 կ., շնորհակալութեամբ ստացանք նուէր տեղիս փոխանորդ Մատթէոս վարդապետից՝ 2 ր. եւ Տայեան Արտաշէսից 1 ր., նոր մշտական բեմ կառուցանելու եւ ուրիշ պիտոյքների համար ծախսվեց 186 ր. 72 կ., որոնց հաշիւը ներկայացրած է ուր հարկն է։ 54 ր. 22 կ. զուտ արդիւնքը յանձնվում է գրադարանի մասնաժողովի նախագահին։ Աչքի էր ընկնում թէ առաջնակարգ հարուստների, թէ ձայնաւորների եւ մինչեւ անգամ մասնաժողովի անդամների բացակայութիւնը։ Յայտնում եմ խորին շնորհակալութիւնս այս բարի գործում բոլոր մասնակցողներին։

Բժ. Ն. Տէր-Իսահակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Քութայիսի նահանգի այգեգործները սկսել են մեծ քանակութեամբ գնել ամերիկական վազեր եւ տնկել իրանց այգիներում։ Այգեգործներից մի քանիսը հիմնել են յատուկ տնկարաններ, որտեղից նրանք ծախում են իրանց հարեւաններին ամերիկական վազի մասներ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մեծ համակրանքով է վերաբերվում աշակերտական խմբական ճանապարհորդութիւններին. այս պատճառով շատ միջնակարգ դպրոցներ պատրաստվում են առաջիկայ ամառվայ ընթացքում աշակերտական ճանապարհորդութիւններ կազմակերպել՝ գլխաւորապէս դէպի Կովկաս եւ Անդրկասպեան երկիրը։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը հաստատեց երկաթուղիների գլխաւոր վարչութեան զեկուցումը, որով առաջարկվում էր թոյլ տալ երկաթուղիների վարչութիւնների մէջ ծառայող կանանց ստանձնել կայարանի կառավարչի պաշտօնը՝ երկրորդական նշանակութիւն ունեցող գծերի վրա։

—

«Рус. Лист.» լրագրի ասելով՝ ռուսական թեմերից մէկում, երբ տեղական թեմական իշխանութիւնը քննում էր մետրիքական գրքերը, երեւաց, որ զանազան եկեղեցիների քահանաներ «ապօրինի զաւակի» անունով են մտցնում եկեղեցական մատեանների մէջ այն երեխաների անունները, որոնց մայրերը որ եւ է պատճառով չեն ապրում իրանց օրինաւոր ամուսինների հետ։ Ուշադրութեան առնելով այս հանգամանքը՝ ռուսաց հոգեւոր բարձր իշխանութիւնը բացատրեց, որ քահանաները յիշված դէպքերում վարվում են օրէնքի հակառակ, որովհետեւ ամուսնացած կանանց երեխաների օրինաւորութեան դէմ վէճ բանալու իրաւունքը պատկանում է միայն այդ կանանց ամուսիններին, իսկ ծնունդի օրինաւորութեան կամ ապօրինութեան հարցը կարող է լուծվել բացառապէս դատաստանական վճռով եւ ամենեւին չէ վերաբերում եկեղեցական դասի պարտաւորութիւններին։ Մետրիքական մատեանների քննութիւնից երեւաց նոյնպէս, որ այրի կանանցից կամ աղջիկներից ծնված երեխաների ծննդեան եւ մկրտութեան վկայութիւնների մէջ քահանաները թոյլ են տալիս իրանց աւելացնել «ապօրինի ծնված» խօսքերը։ Այս աւելացումը ցոյց է տալիս, որ եկեղեցական դասը թոյլ է տալիս իրան դատողութիւններ յայտնել երեխայի ծննդեան օրինաւորութեան հարցի մասին, որ նոյնպէս նրանց պարտաւորութիւններին չէ վերաբերում։ Այս ամենը ի նկատի առնելով՝ հոգեւոր բարձր իշխանութիւնը կարգադրեց, որ այսուհետեւ քահանաները, ծննդեան եւ մկրտութեան վկայութիւնները մետրիքական մատեանների մէջ մտցնելիս, թոյլ չը տան իրանց աւելացնել «ապօրինի ծնված» խօսքերը թէ այն երեխաների մասին, որոնք ծնված են ամուսնացած եւ կենդանի ամուսիններ ունեցող կանանցից եւ թէ այրի կանանցից ու աղջիկներից ծնվածների մասին։

—

Երկաթուղու գծի վրայից երթեւեկութիւն ունեցողների ապահովութեան համար՝ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը առաջարկել է երկաթուղիների տեղական վարչութիւններին՝ երթեւեկութեան տեղերում գտնված սիւներն եւ տախտակները ներկել լոյս արձակող բաղադրութեամբ, որպէս զի նրանք տեսանելի լինեն եւ մութ ժամանակ։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ այս տարի գինու բերքը վատ էր եւ այգեգործները դժուար դրութեան մէջ էին։ Փոքր ինչ օգնեց նրանց գինու բարձր գինը, որ համարեա երկու անգամ աւելի թանգ է, քան անցեալ տարի։ Ծախողների համար այդ գինը նպաստաւոր է, բայց սպառողները պէտք է տուժեն։ Հայը այս տարի եւս թանգ է Գանձակի վաճառանոցում։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Խաչմազից Ղուբա գալը անտանելի մի ցաւ է դարձել։ Այդ ճանապարհը, որը ընդամենը $28^1/_2$ վերստ տարածութիւն ունի, պատած է լինում աչնան սկզբից մինչեւ գարնան սկիզբը անանցանելի ցեխով. պօստի սայլակը բերում է մարդուն քաղաք 8—9 ժամում։ Ճարահատեալ Դիվիչու կայարանն են գնում մարդիկ, որտեղ էլ շատ անգամ ֆայէտոն չէ ճարվում, եւ այդտեղից մինչեւ Դիվիչու կայարանը երեք վերստ հիմա անանցանելի, ցեխոտ ճանապարհ է։ Ժամանակ է վերջապէս, որ դէպի Խաչմազ խճուղին շինեն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Քիչ ժամանակ առաջ Պապը կարդինալ Ռիշարին ուղղած նամակում եւ «Matin» լրագրի թղթակցի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ասաւնաց, որ եթէ Ֆրանսիական այժմեան մինիստրութիւնը կը շարունակէ իր հակակղերական քաղաքականութիւնը եւ կսկսէ հալածել կրօնական միաբանութիւնները՝ այն ժամանակ Ֆրանսիան կը կորցնէ իր աւանդական իրաւունքը հովանաւորելու Արեւելքի կաթոլիկ քրիստոնեաներին եւ այդ իրաւունքը կանցնի Գերմանիային։ Ինչպէս եւ պէտք էր սպասել, Պապի սպառնալիքը խոր տպաւորութիւն գործեց Ֆրանսիայում։ Բոլոր լրագիրները եռանդով քննադատում են Լէօն XIII-ի խօսքերը։ Հասկանալի է, որ հակակառավարական լրագիրները համակրանքով են վերաբերվում Պապի վարմունքին եւ Echo de Paris կարծիք է յայտնում, որ եթէ կառավարութիւնը չի լսի Պապին, այն ժամանակ նա կը հրաւիրէ կաթոլիկներին աւելի եռանդով գործել մինիստրութեան դէմ։ Նոյն հարցի մասին խօսելով՝ «Gaulois» կղերական լրագիրը աւելացնում է. «Մինչեւ Վալդէկ-Ռուսսոյի ասպարէզ գալը, մենք ունէինք զինուորական հզօր ոյժ, եւ հզօր Միապետի բարեկամութիւնը թոյլ էր տալիս մեզ վստահութեամբ նայել ապագայի վրա. Ֆրանսիայի անունը հնչվում էր ամեն տեղ, ուր քրիստոնեաներին օգնութիւն էր հարկաւոր։ 10 ամսվայ ընթացքում մինիստրութիւնը կարողացաւ ոչնչացնել այս բոլորը. ուր կը տանի արդեօք նա մեզ վաղը»։ Ընդհակառակը մինիստրութեան համակրող լրագիրները հաւանութիւն չեն տալիս Պապի միջամտութեանը Ֆրանսիայի ներքին գործերում։ «Matin» լրագիրը ցաւ է յայտնում այն կաթոլիկ երկիրների վերաբերմամբ, որոնք հարկադրված են ի նկատի առնել իրանց ներքին գործերում «օտար միապետի» ցանկութիւնները։ «Siècle», «Rapel», «Lanterne» եւ «Petite République» խորհուրդ են տալիս մինիստրութեանը ամենեւին ուշք չը դարձնել Պապի սպառնալիքների վրա եւ ընդհակառակը աւելի եռանդով աշխատել անցկացնելու կրօնական միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծը։ Ըստ երեւոյթին կառավարութիւնը չէ վհատվում Պապի խօսքերից, եւ դրան ապացոյց կարող է լինել այն հանդամանքը, որ արդարադատութեան մինիստրը մօտ օրերումս դիմեց բոլոր դատարանների նախագահներին մի շրջաբերականով, որի մէջ հաղորդում է նրանց, թէ այսուհետեւ դատարանական բոլոր ծառայողներին արդելվում է մասնակցել կրօնական ծիսակատարութիւնների, բացի թաղման հանդէսներից։

—«O' Portuguez» լրագիրը, որ հրատարակվում էր Լօրէնցօ-Մարկէզէյում եւ ապա դադարեց Մօզամբիկի նահանգապետի կարգադրութեամբ՝ բօէրներին եռանդով պաշտպանելու համար, նոյեմբերի 8-ի համարում հաղորդում է մի տարօրինակ տեղեկութիւն։ Լրագիրը հաւատացնում է, թէ նրան առաջարկում էին տպագրել այն ակտի իսկականը, որով Դէվէտի մօտ գերի ընկած գեներալ Բուլլէր երդվում է իր պատուով այլ եւս չը մասնակցել պատերազմին բօէրների դէմ։ Բօէրները գերութիւնից արձակեցին Բուլլէրին միայն այն ժամանակ, երբ նա ստորագրեց այդ ակտը, եւ որպէս զի յետոյ եղելութիւնը սուտ չը համարվի, Դէվէտ վերցրեց Բուլլէրի բոլոր չքանչանները եւ այժմ պահում է իր մօտ։

—Լրագիրները հաղորդում են, որ սպանիական խնամակալուհու նախկին խոստովանահայր եղուիտ, հայր Մօնտանա, որը կղերական լրագիրներից մէկում դաւանաբանական տեսակէտից ապացուցանում էր, որ ազատամիտ համոզմունքները մահացու մեղք են,—արձակվեց պաշտօնից։ Մադրիդից ստացված վերջին տեղեկութիւնների համեմատ, Հռոմի կղերն եւս հաւանութիւն չը տուեց Մօնտանայի չափազանց եռանդին. ազատամտութեան մերկացնողը այս օրերս խիստ յանդիմանութիւն ստացաւ Պապի դեսպանից։ Ազատամիտ եւ հանրապետական պատգամաւորները, տեղեկանալով Մօնտանայի արձակման մասին, հարցապնդում արին կառավարութեան, թէ ում նախաձեռնութեամբ է արձակվել խոստովանահայրը։ Արտաքին գործերի մինիստրը պատասխանեց, որ Մօնտանա արձակվել է հէնց խնամակալուհու պահանջով։ Ապա ազատամիտ հռետորները պահանջեցին, որ պատանի թագաւորի դաստիարակութիւնը յանձնվի ուրիշ անձնց։ Մօնտանա Տօլէդօի կարդինալ արքեպիսկոպոսի քարտուղար էր։ 1880 թ-ին Մօնտանան թագուհու խոստովանահայրը դարձաւ, իսկ յետոյ երիտասարդ թագաւորի ուսուցիչը։

—Ինչպէս հաղորդում են Լօնդօնի լրագիրները, Լօրդ Ռօբէրտս, Մադէրա կղզու վրա գտնված ժամանակ, կտրական կերպով յայտնեց թղթակիցներից մէկին, թէ ինքն երբէք չէ արտասանել այն խօսքերը, որ վերագրում են նրան, այսինքն ինքն երբէք չէ ասել, թէ պատերազմը վերջացած է։ Նա յայտնեց, որ վերջացած է կանոնաւոր պատերազմը, բայց, ի հարկէ, զինուորական գործողութիւնները դեռ երկար կը շարունակվեն։

—«Moniteur Oriental» լրագիրը հաղորդում է, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան պ. Զինովիէվ, սերբիական դեսպան Գրուիչի եւ մի քանի պաշտօնեաների ուղեկցութեամբ, դեկտեմբերի 14-ին, այցելեց Իշխանաց կղզիներից մէկը—Խալկի կղզին, ներկայ լինելու համար գոհացողական մաղթանքին Թագաւորի Կայսրի տողջանալու առիթով։ Մաղթանքը կատարեց Երուսաղէմի յունաց նախկին պատրիարք Նիկոդիմ։

—Կ. Պոլսից Բերլինի լրագիրներին հաղորդում են, որ Բ. Դուռը օսմանեան պետութեան շահերին անհամապատասխան համարեց սիօնիստների ծրագրի քաղաքական մասը, որով նը-

բանք ձգտում են առանձին պետութիւն ստեղծել Պալեստինում, եւ այդ պատճառով արգելեց հրէայ գաղթականներին հողեր գնել այնտեղ։ Միաժամանակ կարգադրութիւն եղաւ, որով թոյլ է տրվում օտարահպատակ հրէաներին ապրել Պալեստինում ոչ աւելի քան երեք ամիս իրանց գալու օրից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ-Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ ուղեւորվեց Վէյմար մեծդքսի թաղմանը ներկայ լինելու համար։

Հակաժանտախտային ժամանաժողովի կողմից յայտարարվում է. «Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Աստրախանի նահանգի, Ցարեվկի գաւառի Վլադիմիրովկա գիւղում հիւանդութիւնը չարունակվում է եւ որ այդ վարակիչ հիւանդութիւնը բուն է դրել մի նոր տեղում, Կիրգիզեան տափարակի Տէկէբայ—Տուբէն աւանում, Թագաւոր Կայսրը հրամայեց պետութեան հարաւ-արեւելեան նահանգներում երեւացած համաճարակի դէմ մաքառելու միջոցների ընդհանուր ղեկավարութիւնը յանձնել Գրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկուն։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Միացեալ-Նահանգները առաջարկեցին, որ վարձատրութեան եւ Չինաստանի հետ առեւտրական նոր դաշնագրեր կապելու հարցերը քննվեն միջազգային մի մասնաժողովում, որ նիստեր ունենայ կամ Վաշինգտոնում եւ կամ պետութիւններից մէկի մայրաքաղաքում։

Դեսպան Կոնջեր հեռագրում է, թէ նա հիմք ունի կարծելու, որ չինական կայսրուհին հակառակվում է պետութիւնների կողմից առաջարկված պայմանները ընդունելուն։

ՊԵԿԻՆ։ Վալդերզէէի ազգական ֆոն—Բաուխ երէկ մի ճանապարհորդութիւն կատարեց եւ 70 մղոն առաջ գնալուց յետոյ վերադառնալով հաղորդեց, թէ գերմանական զօրքերի եւ չինացիների մէջ տեղի ունեցաւ կռիւ Պեկինի հիւսիս-արեւմտեան կողմում։ Հետեւակների երեք վաշտ եւ ուլանների մի զօրաբաժին յանկարծակի հանդիպեցին 2000 չինացիների. սպանված են 200 եւ վիրաւորված են 300 չինացիներ, մնացածները փախան։ Գերմանացիների կողմից սպանված են 3 հոգի, մի օֆիցէր եւ մի քանի զինուորներ վիրաւորված են։

ՊԵԿԻՆ։ Վալդերզէէ վճռել է դուրս քշել բոլոր քնիկ զօրքերը դաշնակից զօրքերի գրաւած նահանգներից. դրա չնորհիւ չինական իշխանութիւնները զրկված կը լինեն միջոցներից կարգ պահպանելու իրանց ենթակայ շրջաններում եւ անկարող կը լինեն ցրվել կարգապահութեան թշնամի տարրերը, որոնց՝ դաշնակիցների ձեռքով պատժվելը առիթ է տալիս բազմապատիկ արիւնհեղութեան եւ բացի այդ այն բանին, որ մեղաւորների հետ անհրաժեշտօրէն ջնաւվում են եւ անմեղները։

ՊԵԿԻՆ։ Հիւսիսային շրջանի գերմանական խուզարկու զօրախումբը Շէէյակովի մօտ, 20 մղոն դէպի հիւսիս-արեւմուտք այն տեղից, ուր հանգոյց է կազմում Մեծ պատը, յանկարծ հանդիպեց երեք հազար հոգուց բաղկացած չինական զօրաբաժնի. գերմանացիները նահանջեցին դէպի Լիւյպիուպու, ուր նրանք օգնութիւն ստացան այն արշաւախմբից, որ դուրս էր եկել Պեկինից դեկտեմբերի 16-ին եւ որ դիմում էր Պաոտինֆու շրջանը։ Տեղադրութիւնը չափազանց լուռնոտ է, գիւղը գտնվում է մի ձորակի մէջ, որի մուտքը ամրացրած է. գերմանացիները յարձակում գործեցին, չինացիները պաշտպանում էին ամրոցի պատնէշը, որի վրա տաս թնդանոթ էր դրված։ Լեռնային թնդանոթների մի ժամ տեւող ռմբաձգութիւնից յետոյ գերմանացիները առան չինացիների դիրքը, յարձակում գործելով ու սուինակոիւ տալով. երեք ժամ տեւող կռուից յետոյ թշնամին դուրս քշվեց ձորակից. թշնամու կորուստը 200 հոգի է կարծվում։ Գերմանացիների կողմից մի հոգի սպանվել է, չորսը վիրաւորվել են։ Առնված գրաւոկներից երեւում է, որ թշնամի զօրախումբը բաղկացած էր անկանոն զօրքից։ Տեղադրութիւնը ճանաչող մարդիկ կարծում են, թէ լեռներում շատ կան այդպիսի գիւղեր, բայց նրանք վտանգաւոր չեն օտարազգիների համար։ Բոլոր չինքերը քանդելուց յետոյ զօրքերը վերադարձան Պեկին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ 1,500 բօէրներ երէկ հասան Սուտերլանդ։ Որովհետեւ ճանապարհը խափանված էր Սուտերլանդի մօտ, նրանք դիմեցին Կալվինիա։

ՊԵԿԻՆ։ Զանազան պետութիւնների կողմից մի եւ նոյն բովանդակութեամբ տասնմէկ արձանագրութիւններ են տրված չինացի խաղաղարար գործակալներին, որպէս զի ստորագրեն եւ կնքեն կայսերական կնիքով։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Լուրերին նայելով Կապի գաղութը ներս խուժած բօէրների խուզարկու պահակախմբեր բանակ են դրել Պիկեթբէրգից 20 մղոն հեռու։

ՊԵԿԻՆ։ Վալդերզէէ մերժեց խաղաղութեան չինական գործակալների միջնորդութիւնը՝ դադարեցնել պատերազմական գործողութիւնները բանակցութիւններ վարելու ժամանակ։

ՐԻՏՖՕՆՏԷԻՆ։ Բօէրների ուժեղ զօրաբաժիններ, Դէլարէյի, Սաէժամպի եւ Բոզգօֆի հրամանատարութեամբ, երեւացին Բուֆֆելսպօրտի շրջաններում։ Նրանց թիւը 5000 են հաշվում։ Պէդժէրի զօրաբաժինը եւ զօրքի ուրիշ մասեր ճանապարհ ընկան, որպէս զի կըտրեն բօէրների ճանապարհը, բայց բօէրները նահանջեցին եւ նրանց մեծամասնութիւնը անցաւ Բրէդտիւկի միջով։ Համարեա վստահութեամբ կարելի է ասել, որ թշնամին այս տեղերում նշանաւոր չափով օգնութիւն ստացաւ Վատերսբերգից։

ՊԵԿԻՆ։ Վալդերզէէ յայտնեց, թէ այն միջնորդութիւնը, որ արաւ Չինաստանը իր դեսպանների միջոցով ներկայումս պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին, չէ կարող յարգվել։ Վալդերզէէ աւելացրեց, թէ ոչ մի արշաւանք առանց հիմքի չէ ձեռնարկվում. ուր որ տեղի էին ունենում արիւնահեղ տեսարաններ եւ խռովութիւններ, այնտեղ էլ ուղարկվում էին զօրքեր, դա միակ միջոցն է անկարգութիւնները դադարեցնելու համար։ Արշաւանքները ձեռնարկվում էին ոչ պատժելու նպատակով, այլ լոկ ոստիկանական պաշտօն կատարելու համար—պաշտպանելու կեանքը եւ գոյքը։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Դէլկասէ հաղորդեց, որ տեղեկութիւն է ստացել Չինաստանից կայսրի համաձայնութեան մասին ընդունելու պետութիւնների միացեալ յայտագիրը եւ դեկտեմբերի 15-ին Սիանֆուում տեղի ունեցած մահվան պատժի մասին, որին ենթարկվեց Իւխսիէն, գլխաւոր յանցաւորներից մէկը, որին խստիւ պատժել պահանջում էին պետութիւնները։

ՆԱՏԷՍՖՕՆՏԷԻՆ։ Բօէրների մի զօրաբաժին, բաղկացած մօտաւորապէս 1500 մարդուց, երեւաց չորս մղոն Սիդերլանդից դէպի հիւսիս։

ԵՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Գեներալ Բաբինգտոն, որ երէկ Վէնտերսդորպից 1,500 հոգուց բաղկացած զօրախմբով գնում էր դէպի հիւսիս, Մեգալիսբերգից 5 մղոն դէպի հարաւ Նաաուվպօրտի ու Բանդֆոնտէյնի մօտ յանկարծ հանդիպեց թշնամիների, որոնք գտնվում էին Դէլարէյի հրամանատարութեան տակ։ Բաբինգտոն դուրս քշեց թշնամուն Վիտվատէրրանդից Նաաուվպօրտի մօտ, իսկ գնդապետ Գորգոն՝ Բանդֆոնտէյնի մօտ. այնուհետեւ նրանք հալածեցին թշնամուն մինչեւ 15 մղոն հեռաւորութեամբ. ենթադրում են, թէ թշնամու զօրախումբը բաղկացած էր 800 հոգուց։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կլան-Վիլիամում, Կալվինիայում, Պիկէտբերգում, Մալմէսբերիում, Տաուէլբերգում, Պաարում եւ Ստելլենբոշում պատերազմական դրութիւն է յայտարարված։

ԿԼԱՆ-ՎԻԼԻԱՄ Կապի գաղութը խուժած բօէրների մի զօրախումբ գրաւեց Կալվինիան եւ մէկ երկու օրից յետոյ սպասվում է Կլան-Վիլիամում։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Վերջին ապստամբութեան պատճառով կազմված երկու կամաւորական կօրպուսներ եկան Պիկէտբերգ եւ առաջ խաղացին դէպի արեւմուտք։—Գեներալը գնդապետը խան զօրաբաժնով գրաւած ունի բարձրութիւնները Սէդերլանդից դէպի հարաւ։—Պարլամէնտի՝ աֆրիկանդէրեան դաշնակցութեան պատկանող անդամների ժողովը վճռեց Մէրրիմանին, Զաուէրին եւ Հօֆմէյէրին ուղարկել Անգլիա, որպէս զի կառավարութեանը, պարլամէնտին եւ ժողովրդին ծանօթացնեն ներկայ դրութեան հետ։

ԲԵՐԼԻՆ։ Պրուսական լանդտագը բացվեց։ Բիւլով կարդաց գահական ճառը, որի մէջ ասված է, թէ երկրի ֆինանսական դրութիւնը բարեյաջող է առաջվան պէս։ Գահական ճառը վերջանում է կոչով, որ ուղղված է դէպի հայրենասիրութեամբ տոգորված աշխատանքը, եւ յիշեցնում է, որ տօնվելու է թագաւորութեան գոյութեան երկհարիւրամեակը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՐԱՆԻԱ

Կ. Ֆլամարիօնի աստղագիտական վէպը
թարգմ. Հ. Առաքելեանի
Ծախվում է. Թիֆլիսում—կենտրօնական գրավաճառանոցում եւ Գ. Գալստեանի մօտ, Лорисъ-Меликовская. 11։ Բագու—Ս. Յարութիւնեանի գրավաճառանոցում։
Գինն է՝ 1 ր. 50 կ. ճանապարհածախսով
9—10

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1901 թ.
ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ
(Շիրակ)
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Ներսէս V կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Րաֆֆիի եւ Յ. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելուած՝ ամենօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան ու նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական-պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէյլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոյնով։ Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տարագրված առանձին թերթով կարող են տանել ձրի։

Գիները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ. գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ, կամ Alexandrople Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող չտապեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (ե) 15—17

ՄԵՂՐ
ՈՍԿԵԳՈՑՆ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ
Ա. Թիւրաբեանի մեղուանոցից
ծախվում է
Ֆրէյլինսկայա փողոցում, № 14 տան մէջ։
Գուշը 9 բուբլի։

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։



ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կայտին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սբևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Զապօվի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։
32—100

ՄԵՂՐ
Վաճառվում է 25 կ. ֆունտը, Յ. Մէլիք-Բախտամեանի խանութում, Սօլոլակի փողոց, № 6։
5—6

„ՇՂԹԱՑ"
ՆԱԻԹԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. փայատէրերի, որ նոր բաց թողած փայերը կարելի է ստանալ 13-ից մինչեւ 23-ն դեկտեմբերի, ընկերութեան գրասենեակում, Երեւանեան հրապարակ, տուն տիկին Խարազեանի, գաւթում։ Նոր փայեր ստանալու համար՝ փայատէրերը պէտք է ժողովեն փայի արժողութեան 15% եւ ներկայացնեն իրանց հին փայերը։
5—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօթ։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 3/16 յունվարի—չոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ալբօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօլափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ) 12—20

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թվի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իրաքանչիւր ՁՈՒՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պաստի ծախս վճարելու։ (ե. հ. չ) 15—20

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Декабря 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.